## ԵՍ ՄԻ ՉԱՐԿՆ ԵՄ ԱՅ ԿՌՎԻ

# *Նա զենքով մասնակից եղավ պատմության կերտմանը*



Դեկտեմբերի 18-ին Արմավիրի՝ Վարդան Բախշյանի անունը կրող դպրոցը նշեց հերոսի մահվան 9-րդ տարելիցը: Եվս մեկ անգամ հարգանքն արտահայտելու և իրենց սրտի խոսքն ասելու էին հավաքվել դպրոցի աշակերտները, ուսուցիչները, մարտական ընկերները:

Բարձր դասարանցիները գեղարվեստական միջոցառում էին նվիրել պատմաբան, մտավորական և մարտիկ Վարդան Բախշյանի անցած ուղուն:

«Վարդանն ամբողջությամբ նվիրվեց պատմությանը և եկավ այն համոզման, որ հայ ժողովրդի միակ փրկությունը միասնականության ու զենքի մեջ է»,- ասաց հերոսի մայրը:

Գնահատելով այսպիսի միջոցառումների կարևորությունը՝ Արմավիրի մարզպետարանի մշակույթի բաժնի վարիչ Ա. Ամիրխանյանն ասաց, որ իսկապես անհրաժեշտ է կարևորել դպրոցականների ազգահայրենասիրական դաստիարակությունը:

...Երբ սկսվեց շարժումը, Վարդանը թողեց իր գիտական գործունեությունը և մեկնեց Արցախ: Հիացել էր Արցախ աշխարհի գեղեցկությամբ, ապրում էր պատմական անցյալով և արագա հաղթանակներից մեկն էր համարում պատմության աղավաղված էջերն աշխարհին ճիշտ պատկերով ներկայացնելը:

1991 թ. դեկտեմբերի 16-ին Բերդաձորի մարտերից հետո Վարդանը մասնակցեց Հասանաբադի համար մղվող կռիվներին: Տասներեք ազատամարտիկների խմբին տեղանքում կողմնորոշվելու համար առաջնորդում էր արցախցի Վլադիկը: Այդ օրը տղաներից շատերը չէին ուզում, որ Վարդանը մասնակցի մարտին: Միգուցե զգում էին վերահաս վտանգը: Դեմ հանդիման դուրս եկած թշնամու հետ մղելը Վարդանի, Գագիկի, Վաչեի կյանքի գինն ունեցավ:

Վարդան Բախշյանի մարմինն ամփոփված է Եռաբլուրում:

ՏԱՐՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ